ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 1183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Մարինե Հովհաննիսյան 05.11.2023 08:19:11	Առաջարկում եմ 3անչափահաս երեխա ունեցող ուսանողների վարձավճարի զեղչը 30%-ից դարձնել 50%:Շնորհակալություն:	Առաջարկը չի ընդունվել: ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ կարգավորվում են պետության կողմից ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ) և կրթաթոշակ տրամադրելու, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման չափերի հետ կապված հարաբերությունները, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից տրամադրվող զեղչերի պայմաններն ու չափերը սահմանված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»	Փոփոխություն չի կատարվել:

			օրենքով, ըստ որի՝ բուհը՝ իր միջոցների հաշվին, հաշվի առնելով բարձր առաջադիմությունը ուսման վարձի առնվազն 30 տոկոս մասնակի փոխհատուցում է տրամադրում երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին:	